


**ՊԱՏՎՈ ԲԼՈՒՐԸ ՈՐՊԵՍ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄԻԱՎՈՐ
ԵՎ ԱՅՆՏԵՂ ՀԱՆԳՉՈՂ ՀԵՐՈՍՆԵՐԸ
Ավագյան Ի. Է.**

Հոդվածում ներկայացնում ենք Ալեքսանդրապոլում Պատվո բլուրի և Ս. Հրեշտակապետ Միքայելի մատուռի հիմնադրման պատմությունը և այն բարձրաստիճան զինվորականներին, ովքեր հուղարկավորվել են Պատվո բլուրում: Հին ռուսական աղբյուրներից բերված են հերոսների կենսագրականները: Ռուսաստանյան պետական ռազմապատմական արխիվում պահպանվող ցուցակի համաձայն կազմվել են դիագրամներ, որոնցում տրված է Պատվո բլուրում հուղարկավորված բարձրաստիճան սպաների և ցածրաստիճան ծառայողների վիճակագրական վերլուծությունը: Անդրադարձ է կատարվում Ալեքսանդրապոլի բերդում հանգչող հերոսներին նույնպես:


Բանալի բառեր. Ի. Լոռիս-Մելիքով, Ֆյոդոր Գուբսկիյ, վիճակագրական սանդղակներ, ռուսական արխիվներ, հրեշտակապետ Միխայիլ:

Նախաբան: Հոդվածում ներկայացնում ենք Ալեքսանդրապոլի Պատվո բլուրի մասին արխիվային տեղեկություններ, որոնք համալրված են ռուսական աղբյուրներում պահպանվող տեղեկություններով: Մբ. Հրեշտակապետ Միքայելի մատուռը, որը կառուցվել է Պատվո բլուրում և մինչ օրս համարվում է Գյումրու պատմամշակութային պահպանական միավորներից մեկը, դեռևս XIX դ. կարևոր նշանակություն է ունեցել քաղաքի ուղղափառ բնակչության կյանքում [6,7,11,12]: Պատվո բլուրում ուղղափառ դավանանքի բարձրաստիճան սպաների թաղումներ կատարվել են դեռևս 1828թ.: Ղրիմի և 1877-78թթ. ռուս-թուրքական պատերազմից հետո գերեզմանոցում շարունակում են երևելի զինվորականների թաղումները: Պատվո բլուրում պաշտոնապես թաղումներ այլևս չեն կատարվում XX դ. սկզբից, երբ քաղաքային

ինքնակառավարման մարմինները հատուկ որոշումներով այլադավաններին թաղումներ կատարելու համար հատուկ տեղեր են հատկացնում նոր գերեզմանոցում [1-5]: ՀՀ խորհրդային իշխանությունը, գերեզմանոցը քանդելով, այստեղ կառուցում է մանկական առողջարան 1940-ական թթ.: 2004թ. տարածքը վերահաշվառվել է որպես պահպանական միավոր (7.7.1.4.892), 2008թ. բարեկարգվել է և հանդիսանում է Գյումրու տեսարժան վայրերից մեկը (Նկ. 1, 2):



Նկ. 1. Պատվո բլուրի և մատուռի այսօրվա հատակագիծը, մասշտաբ 1:1000:



Նկ. 2. Պատվո բլուրի մատուռի հատակագիծը, մասշտաբ 1:200:

Ռուսական աղբյուրները տեղեկություններ են հաղորդում Ալեքսանդրապոլի Պատվո բլուրի և այստեղ հանգչող հերոսների մասին: Աղբյուրներից իմանում ենք, որ Պատվո բլուրում հերոսաբար զոհված սպաներին սկսել են թաղել 1828թ. հետո: Ռուսական արխիվներում են պահպանվում այստեղ հանգչող սպաների ցուցակները [12]: Սպաների և նրանց մասնակցած պատմական անցքերի մասին տեղեկություններ ենք քաղում սպաների մահախոսականներից, որոնք հավաքել և հրատարակել է Մ. Յա. Օլժնսկին [9] «Կովկասը 1841թ. մինչև 1866թ.» աշխատության X «Ալեքսանդրապոլը և Կարսի մարզը 1856թ.» և հաջորդ XI «Կարսի մարզը մինչև խաղաղության կնքումը և հոկտեմբերին Ալեքսանդրապոլում մնալը» [9] գլխում: «Ընթերցողի համար ավելորդ ծանրաբեռնվածություն չի լինի, եթե ես ներկայացնեմ Պատվո բլուրում հանգչող իմ համաժառայակիցների և ծանոթների մի քանի համառոտ մահախոսականները»: Մ. Օլժնսկին սկսում է իր ավագ գործընկեր

Պյոտոր Պետրովիչ Կովալևսկուց: «Այն ժամանակվանից, - գրում է Օլշևսկին, - գեներալ-մայորի կոչումով Պյոտոր Պետրովիչը եղել է Կովկասյան գծի աջ թևի հրամանատար, Կովկասից հեռացվելով՝ դարձել է 13-րդ հետևակային դիվիզիայի հրամանատար, որի հետ դուրս գալով Սուխում-լե Կայում և Վիլենսկի գնդի հետ ժամանելով Ախալցխա՝ այնտեղ դարձավ զորքերի հրամանատար: 1854թ. ստացավ գեներալ-լեյտենանտի աստիճան և նշանակվեց 13-րդ հետևակային դիվիզիայի հրամանատար, որը գտնվում էր Ալեքսանդրապոլի կորպուսի կազմում գլխավոր հրամանատար Սուրավյովի հրամանատարության ներքո»: Կարսի գրոհի ժամանակ Կովալևսկին առաջնորդում էր Շորախի բարձունքների ամրություններին ուղղված գլխավոր շարասյուններից մեկը, երբ մահացու վիրավորում է ստանում:

Հաջորդ մահախոսականը նվիրված էր Տվերյան դրագունական գնդի հրամանատար Կուկոլևսկուն, ով Կովկաս էր ժամանել 1854թ.՝ կոմս Նիրոդի հրամանատարությամբ Նովորոսիյսկի գնդի հետ համահավաք դրագունական բրիգադի կազմում: «Երկարատև ծառայությունից հետո հասել էր գնդի հրամանատարի պատվավոր աստիճանին», - գրում է Մ. Օլշևսկին: Քյուրուկդարայի ճակատամարտում փամփուշտների և արկերի տարափի տակ վերապրելով այս փառահեղ գրոհը, որում Կուկոլևսկու ենթականերից շատերը խփվեցին և վիրավորվեցին, նա սպանվեց Կարսի պաշարման ժամանակ Չավտլիկ-քյոյի բարձունքում:

Օլշևսկին հիշում է նաև Շորախի բարձունքներում զոհված Վիլենսկի գնդի հրամանատար գնդապետ Շիկկիչին և Կարսի մատույցներում սպանված Կովկասյան զբենադերական հրետանային գնդի հրամանատար Մոսկալևին: Աչքի է ընկել նաև Կովկասյան հրաձգային գումարտակի հրամանատար գնդապետ Լուզանովը, որը սպանվեց Շորախի բարձունքների գրոհի ժամանակ: Գլխավոր շտաբի փոխգնդապետ Սվեչինը և կապիտան Ռադիչը մահացել էին վերքերից, առաջինը՝ Բայանդուրի ճակատամարտում՝ ձիուց ընկնելու պատճառով ստացած գլխի վնասվածքից, երկրորդը՝ Կարսի գրոհի ժամանակ: Շիրվանսկի հրաձգային գումարտակի հրամանատար, մայոր Դյակոնովը մահացավ Բաշքատզլարի ճակատամարտում արձակված արկի պատճառով՝ վիրավոր ոտքի անդամահատումից հետո: Աչքի ընկավ նաև Երևանսկի լեյբ-գրենադերական գնդի գումարտակի հրամանատար մայոր Տուրչանովսկին, որը նույնպես սպանվեց Բաշքատզլարի ճակատամարտում: Վերջում Մ. Օլշևսկին կանգ է

առնում Ակսյոնով եղբայրների մահախոսականի վրա, որոնք հանգչում են Պատվո բլուրում: «Ակսյոնով եղբայրները Կովկասյան սակրավորների գումարտակի վաշտերի հրամանատարներ էին և սպանվեցին 1853թ. սեպտեմբերի 17-ին Շորախի ամրությունների գրոհի ժամանակ, գլխավոր հրամանատար Մուրավյովի կազմակերպած Կարսի անձնապաստան [7] անխոհեմ գրոհի ժամանակ»:

Պատվո բլուրում հանգչող հերոսների մեջ առանձնահատուկ է Իվան Եգորի Լոռիս-Մելիքովի (1834-27.02.1898) [8] դերակատարությունը վերջին ռուս-թուրքական պատերազմում: Մասնակցել է ռուս-թուրքական սահմանին տեղի ունեցող մարտերին, Կարս և Էրզրում բերդերի գրոհներին և շրջափակումներին: Մահացել է տիֆից Հիպս-Կալայում: Պատվո բլուրի հին լուսանկարներից մեկում պահպանվել է Իվան Լոռիս-Մելիքովի շքեղ գերեզմանը (Նկ. 3, 4), որի կողքին վեր է խոյանում 1877-1878թթ. ռուս-թուրքական պատերազմի հերոսներին նվիրված հուշարձանը. այն դրվել է Նիժեգորոդսկի 44-րդ դրագունսկի գնդի նվիրատվություններով: Այս մասին են հիշատակում Ռիկմանը և Պորեմբսկին իրենց աշխատության մեջ [10]. «Հոկտեմբերի 12-ին մտնելով Ալեքսանդրապոլ գունդը ուղղվեց Պատվո բլուր, որտեղ, Ղրիմի պատերազմում ընկած և այստեղ հանգչող նիժեգորոդցիների գերեզմանների վրա հոգեհանգիստ կատարվեց: [Պատերազմից] հետո, ձմռանը այս հերոս-համագնդեցիների հիշատակը հավերժացնելու համար հուշարձան կառուցվեց գնդի անունից և հանդիսավոր օծումից հետո կանգնեցվեց Պատվո բլուրում»:



Նկ. 3. Պատվո բլուրի ընդհանուր տեսքը: Աջից՝ հունական խոյակներով գերեզմանում հանգչել է Ի. Լոռիս-Մելիքովի աճյունը: Գերեզմանի հարևանությամբ, բարձր գեղեցիկ խաչով:



Նկ. 4. Գերեզմանոցը և հայկական մատուռը, որը քանդելուց հետո կառուցվեց «Պլպլան ժամը»:

Նույն աղբյուրից նաև իմանում ենք վաղաժամ նահատակված ենթասպա բարոն Դե-Ֆորժետի մասին: Երկու ամիս անց գնդի ջանքերով

հուշակոթող դրվեց Պատվո բլուրում՝ նրա գերեզմանի վրա: Նա առաջինն էր գնդի սպաներից, որ զոհվեց պատերազմի ժամանակ: Վաղաժամ զոհվեց հույսեր ներշնչող այս պատանի սպան, բայց ընկավ պատվով՝ վաստակելով փառքի պսակ» [10]:

Անդրադատնանք ևս երեք հերոսների, որոնք հանգչում են ոչ թե Պատվո բլուրում, այլ Ալեքսանդապոլ բերդում՝ Գեներալ Ֆյոդոր Գուբսկին, Իլյա Չելոկանը և Իվան Մելիքովը [6]: Ալեքսանդրապոլի բերդում՝ Սբ. Ալեքսանդրա եկեղեցու պատի տակ են հանգչում վերջին երկուսը, իսկ եկեղեցու արևելյան պատից՝ բեմից ոչ հեռու՝ գեներալ Գուբսկիին: Գեներալ իշխան Իլյա Զաալովիչ Չելոկանը (Չոլոկաշվիլի) ռուս-թուրքական վերջին պատերազմի հերոս է: Ծնվել է 1823թ. հունվարի 14-ին: Վրացի է, ծագում է Թիֆլիսի նահանգի իշխաններից [14]: Թիֆլիսի մասնավոր դպրոցներից մեկը ավարտելով՝ որպես ուրյադնիկ ծառայության է անցել վրացական միլիցիայում: Նույն թվականին երկու անգամ՝ հունիսին և նոյեմբերին, մասնակցել է գալգալյան լեռնցի ցեղի դեմ կազմակերպված արշավանքներին, քաջության համար պարգևատրվել է «Ի նշան արժանիքի» ռազմական շքանշանով: 1845թ. ստացել է ենթասպայի կոչում: Նույն թվականին մասնակցել է գեներալ Լեբինցևի՝ չեչենների դեմ կազմակերպած արշավանքին և պարգևատրվել է «Արիության համար» մակագրությամբ Սբ. Աննայի 4-րդ աստիճանի շքանշանով: 1849թ. նա մասնակցել է ապստամբ հունգարացիների դեմ կազմակերպված արշավանքին, կոչում աչքի ընկնելու համար ստացել է պորուչիկի տիտղոս և պարգևատրվել է Սբ. Աննայի 3-րդ աստիճանի շքանշանով՝ սրերով և ժապավենով: 1852թ. Չելոկանին շտաբսկապիտանի կոչումով տեղափոխում են Նիժնեգորոդյան դրագունյան գունդ, այս նշանավոր գնդի շարքերում նա մասնակցում է թուրքերի դեմ Բաշքատրզլարի ճակատամարտին: 1854թ. գտնվել է լեզգիական ջոկատի կազմում, որը գործում էր Շամիլի խառնամբոխի դեմ, զինվորական ծառայության համար պարգևատրվում է Սբ. Վլադիմիրի 4-րդ աստիճանի շքանշանով՝ սրերով և ժապավենով: 1858թ. նրան շտաբս-ռոտմիստրի կոչումով տեղափոխում են Նորին գերագանցության պահակազորի լեյբգվարդիական Կովկասյան հեծելավաշտ, հաջորդ տարի՝ օգոստոսի 6-ին, նշանակվում է ֆլիգել-ադյուտանտ (կայսերական համհարզ): Պահակազորում իշխան Չելոկանը մնաց մինչև 1861թ., երբ փոխգնդապետի կոչումով տեղափոխվեց Հյուսիսային դրագունյան գունդ և գործուն մասնակցություն ունեցավ 1862թ. Արդագունյան ջոկատի արշավանքին: 1863թ. արդեն Դադստանյան հեծյալ-անկանոն գնդի

հրամանատարի կոչումով Չելոկանը մասնակցել է Ջակաթալայի օկրուգում բռնկված ընդվզման ճնշմանը, իսկ 1866թ.՝ Կատայսկո-Տաբասարանյան օկրուգի հուզումների ճնշմանը: Աչքի ընկնելու համար նրան շնորհվեց գնդապետի կոչում և Սբ. Աննայի 2-րդ աստիճանի շքանշան՝ կայսերական թագով: 1872թ. ապրիլի 6-ին նրան շնորհվում է գեներալ-մայորի կոչում, և նա ընդգրկվում է բանակային հեծելազոր ու ծառայության նշանակվում Կովկասյան բանակում, նույն տարվա օգոստոսի 30-ին՝ նույն բանակի հրամանատար Նորին գերագանցության շքախմբում:

Թուրքերի դեմ ռազմական գործողություններ սկսելուց հետո Չելոկանը Դադստանյան հեծյալ-անկանոն բրիգադի հրամանատարն էր: Մայիսի 4-ին՝ Կարսի ամրոցի արվարձանների հետախուզման ժամանակ, վեց հարյուր դադստանցու զլուխ անցած՝ մասնակցել է ամրոցից արտագրոհ կատարած թուրքական դրագունների և հետևակային ջոկատի հետ թեժ ընդհարմանը: Դադստանցիները փայլուն սուսերագրոհով հաղթեցին թշնամուն, բայց նրանց հրամանատարը մահացու վիրավորվեց կողի մեջ արձակված գնդակից և մահացավ մայիսի 11-ին Կարսից 15 վերստ հեռավորության վրա՝ Ջախմի մոտ գտնվող ճամբարում [11]:

Գումարտակի հրամանատար, փոխգնդապետ իշխան Իվան Մելիքովը նույնպես վերջին ռուս-թուրքական պատերազմի նշանավոր բարձրաստիճան սպաներից [15]: 1877 թ. նոյեմբերի 6-ին փոխգնդապետ Մելիքովի և գեներալ Կոմարովի շարասյուները Կարսի գրոհի գիշերը հայտնվեցին ծանր վիճակում: Փոխգնդապետ Մելիքովը արագ և թեթև գրավեց Սուվարիի ամրությունները: Թուրքերը, մտածելով, թե գործ ունեն սովորական գիշերային որսորդների հետ, նրան ընդառաջ են ուղարկում ամրությունից երկու հարյուր սաժեն հեռավորության վրա գտնվող առաջադիրքային խմբերը, որոնք արագ ետ են մղվում: Ամրությունը այնքան արագ գրոհվեց, որ ո՛չ Լազարևի, ո՛չ Լոռիս-Մելիքովի ռազմակայաններում ոչ ոք հաղթանակը ազդարարող ազդանշանային հոթիոները չնկատեց: Իսկ փոխգնդապետ Ի. Մելիքովը, ըստ իրեն հանձնարարված գորադասավորման, անցավ Կարս-չայի ձախ ափը և ուղղվեց դեպի Չիմ ամրությունը, որտեղ պիտի միավորվեր գեներալ Կովալյովի շարասյան հետ: Սակայն հասնելով ձախ ափը՝ շարասյունը ենթարկվում է դաժան հրետակոծության թուրքերի կողմից: Ռուսների ուժերը սրընթաց հատնում էին: Որովայնից վիրավոր փոխգնդապետ Ի. Մելիքովը հրաժարվում է տեղափոխվել լազարեթ և

շարունակում է ղեկավարել մարտը: Բայց վերքը մահացու էր. հրամանատարի մահից հետո շարայունը սկսում է հետ նահանջել:


Ֆյոդոր Ալեքսանդրովիչ Գուբսկին [11] (1823-1878թթ.) գեներալ-մայոր, 1877-78թթ. ռուս-թուրքական պատերազմի հերոս է: Ծնվել է 1823թ., դաստիարակվել է I կադետական կորպուսում, որն ավարտել է որպես ենթասպա և ծառայության անցել № 19-ը հեծյալ-հրետանային մարտկոցում: 1861թ. հատուկ աչքի ընկնելու համար նրան տեղափոխում են լեյբ-գվարդիայի հեծյալ մարտկոց, 1864թ. նրան շնորհվում է գնդապետի կոչում, և նա նշանակվում է 5-րդ հեծյալ մարտկոցի, ապա Կուբանի կազակական զորքի հեծյալ-հրետանային բրիգադի հրամանատար: 1871թ. նրան շնորհվում է գեներալ-մայորի կոչում, և նա դառնում է գվարդիական հեծյալ-հրետանային բրիգադի հրամանատար, 1873թ. նշանակվում է Կովկասյան ռազմական օկրուգի հրետանու հրամանատարի օգնական, իսկ 1877թ. նոյեմբերին՝ թուրքերի դեմ գործող կորպուսի հրետանու հրամանատար: Այս պաշտոնում Ֆ. Գուբսկին ծավալեց ոչ միայն եռանդուն վարչական գործունեություն, այլև փայլուն ռազմական: Արդահանը վերցնելու ժամանակ նրա ղեկավարած հրետանու «Փայլուն գործողությունների» համար նա պարգևատրվում է Սբ. Գեորգիի 4-րդ աստիճանի շքանշանով: Ապա հունիսի 13-ին մասնակցել է Զիվինի ճակատամարտին, հոկտեմբերի 3-ին՝ Ալաջայի բարձունքներին Մուխթար-փաշայի ջախջախմանը, որտեղ Ֆ. Գուբսկին, ղեկավարելով Ավլիարի հրետակոծումը, առաջիններից էր, որ բարձրացավ լեռը և սկսեց շուտ տալ գրավված թուրքական հրանոթները, լիցքավորել դրանք և կրակել նահանջող թուրքերի վրա: 1877թ. հոկտեմբերի 27-ին Ֆ. Գուբսկին պարգևատրվեց Սբ. Գեորգիի 3-րդ աստիճանի շքանշանով (ըստ ասպետական ցուցակների՝ №545), հոկտեմբերի 3-ին Ալաջայի բարձունքներում Մուխթար փաշայի զորքի ջախջախումից հետո՝ «Փոխհատուցում գերազանց քաջության և արիության համար» շքանշանով, որտեղ փայլուն գործել էր նրա անմիջական ղեկավարությամբ գործող հրետանին: Նա մահացել է տիֆից 1878թ. փետրվարի 14-ին Հասանկալայում, ռազմական գործողությունների ավարտից ընդամենը 5 օր առաջ: [11]

Այսպիսով, Ալեքսանդրապոլի բերդում հանգչող երեք հերոսներն էլ կարևոր գործունեություն են ծավալել ռուս-թուրքական վերջին պատերազմի ժամանակ, և այդ պատճառով է, որ նրանց աճյունները ամփոփվել են Ալեքսանդրապոլի բերդի տարածքում Սբ. Նահատակ


Ալեքսանդրայի եկեղեցու պատերի տակ և եկեղեցու արևելյան պատից ոչ հեռու: Բացառության կարգով այս երեք հերոսներին հուղարկավորել են Ալեքսանդրապոլի բերդի Սբ. Նահատակ Ալեքսանդրայի եկեղեցու մոտակայքում՝ այն դեպքում, երբ Ղրիմի պատերազմից հետո Պատվո բլուրն արդեն բարձրաստիճան հերոս-սպաների թաղումների վայր էր և կառուցված էր նաև Սբ. Հրեշտակապետ Միխայիլի մատուռը՝ «Պլպլան ժամը», որտեղ մինչև թաղումը դրվում էին ննջեցյալները: Հերոսներից Ֆյոդոր Գուբսկին թաղվել է Սբ. Նահատակ Ալեքսանդրայի եկեղեցու արևելյան աբսիդի դիմաց, գերեզմանի վրա զինակիցների և ընկերների կողմից դրվել է այն ժամանակվա համար շքեղ մի մահարձան, որը մինչ օրս պահպանվում է և համարվում հանրապետական նշանակության հուշարձան: Այսօր, երբ Հարավային Կովկասում այսքան լարված է իրավիճակը, բոլորովին չէր խանգարի ևս մեկ անգամ անդրադառնալ այս և Պատվո բլուրում հանգչող մյուս հերոսներին, ովքեր անձնվիրաբար հերոսացան, որպեսզի Կարսի մարզը վերջապես միանար Ռուսական կայսրության կազմում հայտված Արևելյան Հայաստանին, և վերածվեցին տարածաշրջանում ապրող ազգություներին բարեկամության խորհրդանիշի:

Եզրահանգում: Այսպիսով, ըստ Ռուսաստանյան պետական ռազմապատմական արխիվում պահպանվող ցուցակի [13]՝ Պատվո բլուրում թաղվել է Ղրիմի պատերազմում զոհված 76 սպա՝ 2 գեներալ-լեյտենանտ (2,63%), 7 գնդապետ (9,21%), 2 փոխգնդապետ (2,63%), 4 մայոր (5,26%), 6 շտաբ-կապիտան (7,89%), 4 կապիտան (5,26%), 16 պորուչիկ (21%), 18 պոդպորուչիկ (23,68%), 16 ենթասպա (21%), 1 էսաուլ (1,32%) (զճապատկեր1):

Ցուցակի տվյալներով՝ Պատվո բլուրում թաղվել է ռուս-թուրքական վերջին (1887-1888թթ.) պատերազմում զոհված 88 սպա՝ 5 գեներալ-մայոր (5,68%), 5 գնդապետ (5,68%), 7 փոխգնդապետ (7,95%), 8 մայոր (9,09%), 12 շտաբ-կապիտան (13,64%), 4 կապիտան (4,55%), 16 պորուչիկ (18,18%), 12 պոդպորուչիկ (13,64%), 12 ենթասպա (13,64%), 2 խորունժի (2,27%) (զճապատկեր 2):




Գծապատկեր 1.



Գծապատկեր 2.

Երկու պատերազմներում զոհված սպաների հանրագումարը 164 է, հետևաբար քանակական և տոկոսային հարաբերությունը կլինի հետևյալը՝ 2 գեներալ-լեյտենանտ (1,2%), 5 գեներալ-մայր (3,04%), 12 գնդապետ (7,32%), 9 փոխգնդապետ (5,49%), 12 մայր (7,32%), 18 շտաբ-

կապիտան (10,98%), 8 կապիտան (4,88%), 32 պորուչիկ (19,5%), 30 պոդպորուչիկ (18,29%), 33 ենթասպա (20,1%), 1 եսաուլ (0,6%), 2 համհարզ խորունժի (1,2%): Ինչպես տեսնում ենք, զգալի տոկոս է կազմում ինչպես ցածրաստիճան սպայակազմի զոհերի թիվը, այնպես էլ բարձրաստիճան սպաներինը, որոնց մեջ ընդամենը երկու հայազգի սպաներ կան:



Չժապատկեր 3.

«ХОЛМ ЧЕСТИ» КАК ОХРАНЯЕМАЯ ИСТОРИКО-КУЛЬТУРНАЯ ЕДИНИЦА И ГЕРОИ, КОТОРЫЕ ЗАХОРОНЕНЫ ТАМ

Авагян И. Э.

В статье рассмотрены вопросы истории основания Холма чести и часовни Св. Архистратига Михаила в городе Александрополь и тех высокопоставленных военных, которые похоронены на Холме чести. Дана биография героев по некоторым старорусским источникам. По данным Российского Государственного Военно-исторического архива составлены диаграммы, в которых дана статистика похороненных на Холме чести высокопоставленных офицеров и нижних чинов. В статье представлены также герои, которые были похоронены в крепости Александрополь.

Ключевые слова: И. Лорис-Меликов, Федор Губский, статистические диаграммы, российские архивы, архангел Михаил.

"HILL OF HONOR" AS A PROTECTIVE HISTORICAL AND CULTURAL UNIT OF HEROES, WHO WERE BURIED THERE

Avagyan I. E.

The article examines the history of the founding of the Hill of Honor and the chapel of St. Michael the Archangel in the city of Alexandropol and those high-ranking military men who were buried on the Hill of Honor. The biography of the heroes is given according to some old Russian sources. According to the data of the Russian State Military-Historical Archive, diagrams have been drawn up, which give the statistics of high-ranking officers and lower ranks buried on the Hill of Honor. The article also highlights the heroes, who were buried in the fortresses of Alexandropol.

Keywords: I. Loris-Meliqov, Fedor Gubskiy, statistical charts, Russian archives, Archangel Michail.

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. ՀԱԱ, ֆ. 105, ց. 2, գ. 101, թ. 1-33:
2. ՀԱԱ, ֆ. 105, ց. 2, գ. 710, թ. 1-4:
3. ՀԱԱ, ֆ. 105, ց. 2, գ. 4, 24, 719:
4. ՀԱԱ, ֆ. 94, ց. 1, գ. 2512:
5. Ավագյան Ի. Գյումրու հին գերեզմանոցը որպես մշակութային պահպանական միավոր// ՇՀՀԿ Գիտական աշխատություններ: 2018: Հատոր XXI: Էջ 195-210:
6. Ավագյան Ի. Ալեքսանդրապոլի զինվորական եկեղեցիները որպես մշակութային պահպանական միավոր// ՇՀՀԿ Գիտական աշխատություններ: 2019: Հատոր 1-2 (22): Էջ 149-160:
7. Ղարիբյան Ա.Ս. Ռուս-հայերեն բառարան մեկ հատորով, երկրորդ հրատարակություն: Երևան: «Հայաստան» հրատ.: 1977: 1435 էջ:
8. Гогитцидзе М., Бежиташвили Г. Военная элита Армении, (Армяне-генералы, уроженцы Грузии), Биографический справочник. Тбилиси: Изд.-во „СВЕТИ,,. 2014. 232 с.
9. Ольшевский М. Я. Записки, Кавказ с 1841 по 1866гг.// Русская старина. 1894. Июль, ном. 9. С. 40-43, <http://chechen.org/2009/06/02>
10. Рикман Л. П., Порембский С. И. Описание боевой жизни 44-го Драгунского Нижегородского Его величества короля Витембергского полка в минувшую войну 1877-1878-го годов, под редакцией

- Чернявского. Тифлис: Типография Штаба Кавказского военного округа. 1885. 160 с. <https://www.prlib.ru/item/355065>
11. Старчевский А. Памятник Восточной войны 1877-78 гг. IV. Спб.: Типография. Б. Г. Янпольского. 1878. 490 с. <https://www.prlib.ru/item/436304>.
 12. <http://www.yerkramas.org/article/8629/geroicheskij-xolm-v-gyumri> (24.03.2019)
 13. poxoronka.ru/news/1472-kholm-chesti-kladbishche-russko-turetskikh-vojn-kompanij-1828-1855-1877-1878gg (24.03.2019)
 14. Илья Заалович Чоколашвили, Поиск предков и родственников. История Грузии, история родов. Генеалогическая база данных Грузии, <https://nobility.pro/ru/statya/623-cholokashvili-ilya-zaalovich.html> (02.12.2021)
 15. 102-ая ордена Александра Невского российская военная база, историческая справка https://gyumri.mid.ru/ru/sootechestvenniki/102_aya_rossiyskaya_voennaya_baza/ (02.12.2021)

Տեղեկություններ հեղինակի մասին

Ավագյան Ի. Է. – պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ
Շիրակի պետական համալսարան
«Կումայրի» պատմամշակութային արգելոց-թանգարան
Էլ. փոստ՝ inga.avagyan.76@mail.ru

Տրվել է խմբագրություն՝ 07.09.2021
Գրախոսվել է՝ 18.02.2022